ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության
ապահովման վարչության պետ
Ս.Հովհաննիսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ներքին գործերի նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ 03.12.2025-12.05.2026թթ.

2025 թվականի դեկտեմբերի 3-ից 2026 թ. մայիսի 12-ն ընկած ժամանակահատվածում
ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության փորձագետ՝
Աննա Արարատի Գալստյանիս կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1) Մասնակցել եմ պետական և այլ մարմիններից ՀՀ ՆԳ նախարարությանը և նրան ենթակա պետական մարմիններին հասցեագրված ոչ գաղտնի փաստաթղթերի հաշվառման և ըստ մակագրության համապատասխան հասցեատերերին առաքման աշխատանքներին.
2) Մասնակցել եմ ՀՀ ՆԳ նախարարությանն ենթակա պետական մարմինների ղեկավարների կողմից ստորագրված ոչ գաղտնի իրավական ակտերի հաշվառման, պահպանման, բազմացման և առաքման աշխատանքներին.
3) Հավաքագրել եմ գրություններով պահանջվող արխիվային փաստաթղթերի պատճեններն ու պատասխան գրությունները.
4) Մասնակցել եմ գործավարության կարգի պահանջներին համապատասխան Նախարարությունից առաքվող և Նախարարություն մուտքագրվող փաստաթղթերի, նամակների և դիմումների փաստաթղթաշրջանառությանը.
5) Մասնակցել եմ արխիվային փաստաթղթերի սահմանված կարգով պահպանման, օգտագործման, տրամադրման և փաստաթղթերի արխիվ հանձնման ու դրանց արխիվացման աշխատանքներին:

ՀՀ ՆԳՆ ՓՇԱՎ փորձագետ Ա. Գալստյան
« 12 » մայիսի 2026թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ «բավարար»:

ՀՀ ՆԳՆ փաստաթղթաշրջանառության
ապահովման վարչության ՓՇԱ բաժնի պետ Ռ.Շահվերդյան

«12» 05 2026թ.